

վկ. Ս. Դեմետրիոսի: Թղ. 125ա<sup>2</sup>. Սահմի Ժէ: Հոկտ. ԻԶ: Վարք եւ յիշ. Ս. Անիկո- լոսի եպիսկոպոսին: Թղ. 125բ<sup>2</sup>. Ի սմին ա- ւուր եղեւ շարժ մեծ եւ անաղին ի Կոստան- գինուպոլիս, յամս Լեւոնի կայսեր...: Յայսմ. նահատակութիւն Սմբատայ Բաղրատունոյ ի ԽԳ թվականիս Հայոց: Թղ. 126ա<sup>2</sup>. Սահմի ԺԸ: Հոկտ. Իէ: Վկ. Ս. Կապետոլինեա եւ աղախնոյն իւրոյ: Թղ. 126բ<sup>2</sup>. Յայսմ. վկ. երկց եղբարցն՝ Կղոսիոսի, Սատերիոսի եւ Նեներիոսի: Թղ. 127ա<sup>2</sup>. Սահմի ԺԹ: Հոկտ. ԻԸ: Վարք եւ յիշ. Աբրահամու արդար ճղնաւոր քահանային: Թղ. 128բ<sup>1</sup>. Սահմի Ի: Հոկտ. ԻԹ: Տօն է Ս. Կուսանացն Նունեա եւ Մանեա: Թղ. 130ա<sup>1</sup>. Սահմի ԻԱ: Հոկտ. Լ: Վկ. Չենորայ եպիսկոպոսին եւ Չենորեայ: Թղ. 130բ<sup>2</sup>. Յայսմ. ետես Պրոկղոս զառա- քեալն Պօղոս՝ մերձ Յոհաննու Ոսկերբա- նին...: Թղ. 131բ<sup>1</sup>. Սահմի ԻԲ: Հոկտ. ԼԱ: Վկ. Ս. Եպիմարքոսի եւ Անտոնինոսի: Թղ. 132ա<sup>2</sup>. Յայսմ. վկ. Ս. Մելասպիոսի եւ ա- մուսնոյն իւրոյ Կասիանեա եւ որդւոյն նորա Անտոնինոսի: Թղ. 132բ<sup>1</sup>. Յայսմ. կատա- րեցան Ս. վկայքն Քրիստոսի ի Կեսարիայ ի Մաքսիմիանոսէ արքայէ, Անտոնինոս քահա- նայն եւ Նիկիֆօսոս Ձեբինան եւ Գերանոս եւ աղախին Քրիստոսի Մանաթիայ Իւսկիլ- թոյ պօլսէ: Պատմութիւն կնոջ միոյ՝ որոյ անուն էր Շնոհֆոր: Սա էր ի գաւառէն Խախտեաց, որ այժմ ասի Բաբերդ, ի գեղջէն որ կոչի Վերին Խայիք եւ էր սա անակին ումեմն քրիստոնէի...: Թղ. 133բ<sup>1</sup>. Սահմի ԻԳ: Նոյեմբեր Ա: Պատմութիւն անարձաթ րժշկացն՝ Կողմայի եւ Դամիանոսի: Թղ. 135ա<sup>1</sup>. Ասացեալ Ս. վարդապետաց Ներբո- ղեան ի պատիւ ամենայն սրբոց, հնոց եւ նո- րոց: Կաթողիկէ եկեղեցի սուրբ՝ երկին յերկրի հաստատեցաւ...: Թղ. 138բ<sup>1</sup>. Սահմի ԻԴ: Նոյ. Բ: Վկ. Սրբոյն Յակիթոսի Պրզաստոսի եւ Անեմբեստոսի: Թղ. 139ա<sup>2</sup>. Ի սմին աւուր՝ եպիսկոպոսն Փոանդաց սուրբն Մարտինոս...: Թղ. 139բ<sup>1</sup>. Սահմի ԻԵ: Նոյ. Գ: Վկ. Ս. Ստեփաննոսի Հոռոմայ հայրապետին եւ որոց ընդ նմա: Թղ. 142ա<sup>1</sup>. Սահմի ԻԶ: Նոյ. Դ: Վկ. Ս. Ակիսիմեա եպիսկոպոսին. եւ Յովսէփայ Քահանային եւ Այիթարայ Սարկաւազին: Թղ. 142բ<sup>2</sup>. Սահմի ԻԷ: Նոյ. Ե: Վկ. Սրբուհոյն Կիւրեհայ եւ Մատրոնայ: Թ. 143բ<sup>2</sup>. Սահմի ԻԸ: Նոյ. Զ: Տօն է եւ յիշ. Ս. Պօղոսի խոստովանողին: Թղ. 145բ<sup>1</sup>. Սահմի ԻԹ: Նոյ. Է: Վկ. Ս.

Պորփիրոսի Գուսանին: Թղ. 146ա<sup>1</sup>. Ի սմին աւուր յետ ժամանակաց՝ յաւուրս Լեւոնի կայսեր՝ անկաւ փոշի յերկնից ի Կոստանդի- նուպոլիս եւ նստաւ կիսաչափ թղոյ մոխիրն ի վերայ քաղաքին...: Դարձեալ ի ՃԿԶ (=717) թուականին Հայոց. Յաւուրս միում յՈւրհայ քաղաք տեսին, զի արք Ը ելին ի գե- րեղմանացն...: Թղ. 146բ<sup>1</sup>. Սահմի Լ: Նոյ. Ը: Տաւն է Ս. Հրեշտակապետացն՝ Գարբէլէլի եւ Միքայէլի եւ ամենայն երկնա- ւոր զօրացն: Թղ. 148ա<sup>1</sup>. Պատճառք յաղապս Երկնայնոց դասուցն...: Տեանն Ներսէսի սասցեալ մաղթանք...:

(Շարունակելի:.) Ե. ԳԱՍԱՊԵԱՆ

**ՄԸՂԱՐԻԱՅ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԻՆ ԿՈՆԳՐԵՆՏԵՐԸ**

Հայաստանի այն վանքերէն է Մաղար- դայ Նախավկայի վանքը<sup>1</sup>, որ կաթողի- կոսական շատ մը կոնդակներ ընդունած է: Անոնցմէ շատերն անկորուստ ու անվթար մեր օրերը հասած են, թէպէտ չեն մնացած այն վանքին չորս պատերուն մէջ, որուն կը վե- րաբերին եւ կամ որուն համար հանուած են:

Այդ կոնդակները գրուած են կամ վան- քին առաջնորդներու անուանումի ու հաս- տատութեան առթիւ եւ անոնք հանդիսական ոճով եւ գեղեցիկ զարդերով ու զրբերով օժ- տուած են, վասն զի աւետիս ունին եւ ուրա- խութիւն պատճառող բովանդակութիւն եւ կամ վանքի նորոգութիւններու եւ պարտե- րու թեթեւացումի համար եւ այդ պարագային անոնք յորդորական են ու պարզ իրենց ար- տաքինին մէջ — կարծես վանքին խեղճու- թիւնը ձեւով մը պատկերացնել ուզէին: Քանի մը կոնդակ ալ գրուած են վէճերը բար- նալու համար:

Ս. Նախավկայի վանքին անունով ելած են 25է աւելի կոնդակ: Այդ կոնդակներէն մի քանին արդէն տպագրութեամբ ծանօթ են (հմտ. վարը): Անոնցմէ կարեւոր մաս մը Kohler զբովանձառէն Հ. Ն. Ակիսեան (իբրեւ Մատենադարանապետ) 1914ին դնած է եւ այժմ կը գտնուին Վիենն. Միսիթարեան Մա- տենադարանի Չեռագրաց Հաւաքածոյին

<sup>1</sup> Նախավկայի վանքի մասին հմտ. Հանդէս Ամ- սորեայ, 1941, էջ 200:

Թ. 694 տիին մէջ: Իսկ քանի մը հատն ալ անունով կամ բովանդակութեամբ եւ աչքի առջեւ ունիմ Ստեփանոս Զուղայեցիին զրէչն: Անոնցմէ մի քանին Հ. Ն. Ակիսեան Երեւան Թ. 683 Կոնդակաց Հաւաքածոյէն արտա- քրած է:

Ստեփանոս Զուղայեցի, միաբան, աւե- լածու եւ տեսուչ Նախավկայի վանքի, 1736ին Աբրահամ կաթողիկոսի հրամանով այն վան- քին կոնդակներու արտագրութեան կը սկսի: Ահա իր խօսքերը՝

«Հրամանաւ Տեանն Աբրահամու ամե- նայն Հայոց կաթողիկոսի այս չորեսին կոն- դակս օրինակեցի ըստ ըզմի նորին ի միջոյ հնգէտասան կոնդակացն հնազունից կաթո- ղիկոսացն Հայոց, վասն զի եւ նոքա ի սոյն ոճ եւ ի սոյն ձեւ բանից գոյին ներգրեցեալք, վասն որոյ ոչ կամեցաք զմայրն ձանձրութեան ի մէջ ածել, այլ զչորեսին այս բաւական հա- մարեցաք իբր հայելի իմն որ ընդ սոքօք զառ- հայել եւ ընդ նուրնս բանք, զի զհնազոյնս ի ձեռն նորագունիցս ծանիցի: Զարքայականն հնազոյն, զԳրիգորին, զՄիքայէլին եւ զՄել- քիսէզթին կաթողիկոսացն նասրադոյնս, իսկ զմիջինսն որ ըստ սովաւ (ի բա)ց թողաք, զի սոքօք ծանիցես: Զկնի Արքայականին եւ քա- հանայականին պետական հրամանադրոց, այսինքն Աշոտայ եւ Տեանն Խաչկայ, որ ի ՆԻԵ թուականէն Հայոց, կայր

զկոնդակն Տեանն Կարապետի

եւ ապա Տեանն Պօղոսի ի ՊԿԷ	»
երեք ի Տեանն Գրիգորէ ի ՊԹ	»
Տեանն Գրիգորէ ի ԶԾԵ	»
Տեանն Գրիգորէ (ի) ԶԱ	»
եւս Տեանն Արիստակէսէ (ի) ԶԻԵ	»
Տեանն Սարգսէ (ի) ԶԾԵ	»
եւ եւս Արիստակէսէ Տեանն ի ԶԳ	»
ի տէր Միքայէլի (ի) ՌԶ	»
եւս ի տէր Եղիշէէ (ի) ԶԾԳ	»
ի տէր Ստեփանոսէ (ի) ԶԳԴ	»
եւս ի տէր Մելքիսեթէ (ի) ՌԿԲ	»

Ըստ վերասայելումն զչորեսին բաւական վարջեցի ընդունողացն եւ Քրիստոս (ի) մար- դասիրին փառք յաւիտեանս ամէն: Օրինա- կող կոնդակացս Ստեփաննոս հին Զուղայեցի միաբան սուրբ էջմիածնի, աւելածու եւ տե- սուչ վանաց Ս. Ստեփաննոսի Նախավկային, որդի անն դեռհի եւ քարակոփի Մուրատ- խան կոչեցելոյ, որդւոյ Յովհաննիսի, որդւոյ

Մելքոնի, յորդւոյ Յեսեսայ, յեղոր հարա- դատի Տեանն Յակօրայ Զրքեանն առձայեցելոյ եւ մակառ ասելոյ իբր Շիրականեան, ի ներ թուաբերութեանս Հայոց ՌՃԶԵ ամի, յամ- սեան Դեկտեմբերի ԺԳ. զրաւ նորին առ- կայացաւ ձեռամբ (Ստեփաննոսի) առ դրան սուրբ Նախավկային Մաղարթայ վան կոչե- ցելոյ ի Նախչուան դաւառի» (Ակիսեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Երեւան, 683):

Դժբախտաբար Ստեփանոս Զուղայեցիին իր այս յիշատակագրութեամբ շատ մը դժուարութիւններ ու խնդիրներ — մանաւանդ թուականի — կը յարուցանէ, ինչպէս մէն մի կոնդակի մասին խօսուած ատեն պիտի նկատուի: Սակայն ամէն պարագայի իրեն երախտապարտ պիտի մնանք, վասն զի շատ մը կոնդակներու գոյութիւն ունենալն ու մի քանիին արտագրութիւնն իր գրչին կը պար- տինք:

Նախավկայի վանքի կոնդակներու հրա- տարակութիւնը կ'ընենք այն պիտակցու- թեամբ, որ անոնք այդ վանքին պատմութեան համար հարկաւոր են եւ կամ բաղձալի:

Ա.

ԿՈՆԳՐԱԿ ԽԱԶԻԿ Ա. ԱՐՇԱՐՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (972—992)

Ստեփան Զուղայեցի իր յիշատակագրու- թեան մէջ կը գրէ՝ «Զկնի արքայականին եւ քահանայականին պետական հրամանա- գրոց, այսինքն Աշոտոյ եւ տեանն Խաչկայ, որ ի ՆԻԵ թուականին»: Այս խօսքերով կը յայտնէ թէ՛ Խաչկի Ա. կաթողիկոսը Նախա- վկայի վանքին համար կոնդակ մը գրած է եւ ինքը զայն արտագրած 1736ին: Սուու- դիւ Խաչկի կաթողիկոսի անունովը Նախա- վկայի վանքին հայոզ կոնդակ մը կայ ու հրա- տարակուած է:

Կոնդակին գրութեան ոճը եւ գաղափար- ներու եւ ասութիւններու ետեւառաջութիւնն իրաւի Հ. Ալիշանի մէջ կասկած կը յարու- ցանեն՝ «Թէպէտ եւ հին ասի, այլ ոչ թուի ինչ վաւերական կամ հարազատ բնագրին, զի երեւին ի նմին անհեղեղ մեծարանու- թիւնք» (Սիսական, էջ 516, ծն. 1): Սուու- դիւ այս կոնդակն ուրիշ բան չէ, բայց եթէ Աշոտ Արարմաճին անունով հասած նուիրա- գրին (Մեսրոպ եպիսկոպոս Սմբատեան, Երնջակ, էջ 418—420, Հանդէս Ամսօրեայ.

1941, էջ 204) եւ ուրիշ կոնդակի մը — Խառնաշփոթ ամփոփումը:

Զունինք այս կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

Բայց ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ է՛

Անուամբ անեղին Աստուծոյ Հաւր եւ ի փառս ծնելոյն ի նմանէ անեղապէս Որդւոյն միածնի եւ ի փառս զղիւնեցելոյն յէութենէ Հոգւոյն ճշմարտի: Այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է եւ աւրհնութիւն եւ ի հոգեւոր հովուութեան Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի եւ հարաւոյ Հայոց թաղաւորն Աշոտ յորջորջեալ անուամբ բարեպաշտ եւ մեծ Շահանշահի: Ես Աշոտ թաղաւոր թաղաւորաց ամենայն տիկերաց եկեալ ի սուրբ ուխտս աստուածաբնակ Նախավկայիս հանդերձ զաւրաւքս, թաղաւորաւք եւ իշխանաւք Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի երկրպագեալ սուրբ տաճարիս հին Մաղարդայ վանից երանելի կրանաւորս աստուածամեծար մեծանուն Տեառն Բարդէնի հայկազնոյ նախաշինաւդ եւ ի Քրիստոս ծնաւդ հոգեւոր գառանց... մանկանց եկեղեցւոյ եւ բարձր հրամանի բարեպաշտ թաղաւորի եւ Տեառն Խաչկայ Հայոց կաթողիկոսի եղեւ ձեռնադրեալ արքեպիսկոպոսապետ ՆԻՆ տոմարիս Արամեան մնացուածիս. եղեւ կատարումն շինութեան եւ նորոգութեան աստուածաբնակ սուրբ Նախավկայիս ջանիւք եւ աշխատութեամբ Տեառն Բարդէնի, որ էր սա շինեալ սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի: Եւ ի սուրբ տաճարիս կայ հանդուցեալ սեւեռեալ բեւեռն բազկացն Յիսուսի եւ արքապայան թաղից փուշ պահէն ճիւղ մի եւ ի Քրիստոսի ձեռաց զ. հատ մանանայն եւ բազմահաւք սրբութեանցս որ աստ կան հաւաքեալ: Եւ ետու հնձէքս եւ հայրենիքս եւ դաստակերտ եւ ընծայ (ան) հին Մաղարդայ վանից սուրբ Ստեփաննոս Նախավկայիս, Տիրամայր Ս. Աստուածածնին եւ սուրբ Գէորգ զաւրաւարին անդառնալի եւ բարձր հրամանաւ մերով թեմ եւ վիճակ, զոր եւ սահմանեալ էր ի նախնեացն մերոց եւ սուրբ հայրապետացն մերոց Տեառն Ներսիսի թոռին մերոյ սուրբ Լուսաւորչին: Նախ առաջին խոյակապ եւ հռչակաւոր մայրաքաղաքն Նախիջևան ի Կող, զաւստն բուրովին, ի Ոոյ որ եւ Զարեանդ գաւառ եւ ամենայն վիճակն իւր բոլորովին մինչ ի Նուան, ի Ղարազայն, որ բաժանի Առա-

քելոց յերկրէն եւ դնայ մինչեւ ի Ղարաթափան եւ բաժանի ի Սալմաստայ, ի յերայտայ մինչեւ ի Մարանդ... Մարանդ իւր վիճակովն, Իշրինթալն իւր երկրովն դնայ մինչ ի դղեակն Խոսրովու, ի յԱղատ եւ ի Գերան եւ ի Զուղայ եւ իւր վանքն, ի յԱստապատ եւ իւր վանքն, ի Շամբ եւ իւր վանքն, ի Զաղացտեղն, ի յԱրարքն եւ իւր վանքն, եւ յամենայն Դիտապալաւացի յարեւելեան հարաւոյ, տուաք ընծայ եւ հայրենիք անդառնալի եւ բարձր հրամանաւ մինչեւ ի դաւուստն Քրիստոսի եւ ահեղ դատաստանն եւ մի ոք իշխեսցէ ի մեծաց եւ ի փոքունց արդեւ առնուլ կամ խաւսել չար բան եւ որք ի ժամանակի ժամանակի կան ի պաշտան սրբութեան, անմոռաց պարտիք յիշել ի Քրիստոս: Եւ յայսմ հետէ ի դաւառաց սահմանեալ թեմէն եւ վիճակէն Դիտապալաւացի արդիորդաց կամ տանուտեարք յերկրէն կամ գեղջէն մեծ մարդ կամ փոքր՝ այս սահմանեալ թեմիս եւ վիճակիս եւ յամենայն անդաստանաց եւ ամենայն արմտիք եւ իրաւունք որ տալ կամին ի յԱստուծոյ եւ յԱթոռոյս, որք ջանան հարկս պահանջել կամ ընդ չարով առնել այնպիսիքն նոյնեալ եղիցին ՅԺԸ հայրապետացն, վարձքն զԿորնայ եւ զԴանայ առցեն, մասն եւ բաժին ընդ Յուդայի եւ Կայենի եւ խաչահանուացն եղիցին ամէն: Եւ աւարտումն եղեւ բանիս եւ զրլիս ձեռամբ մեծանուն Տեառն Խաչկայ կաթողիկոսի ամենայն Հայոց եւ տէր Բարդէնի եւ մեծ իշխանացն Ապղարիպի իշխանի Հայոց եւ Վրաց. Վասակ իշխանի Սիւնեաց, Գրիգոր իշխանի Ռշտունեաց. Գէորգ իշխանի Գնունեաց, Շապուհ իշխանի Արժրունեաց, նամակիս եւ Սիկիլիս(ո) կատարողքն աւրհնին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց եւ խափանիչքն դատին ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Տեառն Խաչկայ կաթողիկոսի ամենայն Հայոց պատրիարք առաքելական տանս առաքեցաք զբաւորական աւրհնութեան հրամանաւ մեծանուն երջանիկ Տէր Բարդէն արքեպիսկոպոս պալ առ ձեզ եւ առաքելարար շրջեսցի ընդ միջի ձերում վարդապետել, խրատել եւ ուսուցանել ի յաւրէնս եւ ի պատուիրանս Տեառն կալ յանարատութեան ի տուէ եւ ի դիշերի, տալով զանձն աւրինակ ձեզ ամենեցուն ինքն արասցէ եւ ձեզ ուսուցէ սրբութեամբ, արդարութեամբ, խոնարհութեամբ եւ երկիւղիւ, սիրովն առ Աստուած եւ առ

ընկերս իւր եղբայրասիրութեամբ, ողորմածութեամբ եւ աղաւթիւք, լինել այցելու որրոց եւ այրեաց, տնանկաց եւ կարաւանաց կարեկից սիրովն Քրիստոսի, կոչեսցէ զարժանաւորսն եւ զիմաստունսն ի կարգ եւ յաստիճան կիսասարկաւազութեան, եւ քահանայութեան: Կալցի եւ հրամանաւ մերով ի վերայ ձեր իշխանութիւն առաքելական կապել եւ արձակել յերկինս եւ յերկրի, զմեղուցեալսն կշտամբել եւ յանդիմանել եւ զղջացեալսն ընդունել յապաշխարութիւն, որով եւ դուք ամենեքեան սիրելի որդիք ի Քրիստոս զաստուածապատիւ եւ զառաքելաշնորհ Արքեպիսկոպոսդ մեծանուն Տէր Բարդէն մեծաւ պատուով յոյժ սիրով ընկալարուք որպէս հրեշտակ Աստուծոյ եւ առաքեալ Քրիստոսի եւ ամենայն հոգեւորական խրատուց դորա, որ ի շահ եւ աւզուտ է հոգւոց ձերոց հնազանդութեամբ ունկնդիր լերուք Այլ եւ կանոնեալ հաս եւ զիրաւունք զոր պարտիք տալ յԱստուծոյ բաժին Աթոռոյ, զհատ տանց քահանայից եւ զամենայն ընտանեաց նոցա, զերախայրիս հնձանոց, զտեառնականս, զխաչաւրհնէքնսն եւ զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց, կենդանեաց եւ ննջեցելոց, բազմականս եւ զանկարծամահ եւ զառակամահ, եւս ամենայն իրաւունս կենաց եւ մահու, լիով անթերի տուք ի ձեռս դորա զուարթ եւ առատ, զի զտուրս զուարթ եւ առատ սիրէ Աստուած: Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ սմա եւ հրամանիս մեր եւ արդեցէ իրաւունք տալոյ կամ խորեսցէ, կամ (առ) աւազ անկանի եւ յուշ հատուցանէ սուրբ Նախավկայի վանաց, զի որ ոք զմա կամ հրամանիս մեր հակառակ լինիցի նա այնպիսին է ընդ անիծաւք, ներքոյ բանադրանաց, զանիճան Կայենի առցէ յԱստուծոյ, զմասն Յուդայի եւ զխաչահանուացն: Որով աւրհնեալքն ի դմանէ աւրհնեալ եղիցին յԱստուծոյ, կապեալքն ի նմին մնացեն մինչեւ զղջացին: Վասն որոյ ի մտանել դորա եւ հոգեւորական բարձր հրամանիս մերոյ առ ձեզ եւ սուրբ Սիոնիս իջցէ եւ շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր եւթնապատիկ, լցուցէ զձեզ ամենայն հոգեւոր եւ մարմնաւոր բարութեամբ, բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն եւ զպատուհաս եւ զտարածամ մահ յաշխարհէ ձեր. տացէ եւ ձեզ շինութիւն, անդորրութիւն եւ խաղաղութիւն, բուսոց եւ տնկոց եւ ամենայն անդէոց ձեր յաջողութիւն եւ քաղցր պտղաբերութիւն, պաճարեղէն ա-

նանոց ձեր անսխալ ծննդականութիւն եւ ամենայն բարեաց ձեր լիութիւն եւ առատութիւն: Եւ աւրհնեցէ զձեզ զամենեւեան Քրիստոս Աստուած մեր, որպէս զի զառաքեալ կեանս վայելեցէք եւ երկնից արքայութեան եւ թաղաւորութեան հասանցէք ընդ ամենայն սուրբս ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Շնորհեցաք ի ձեռն դորա ձեզ պարգեւս հոգեւորական զեղն աւրհնութեան սրբալոյս եւ աստուածազործակ սուրբ տանն ի լուսաւորութիւն նորածնելոց աւազանաւ յորդեգրութիւն Հաւրն երկնաւորի եւ ի ժառանգակցութիւն Քրիստոսի Աստուծոյ յուսոյն մեր, զնոյն ի ձախտն նշան հաստատութեան, յաւժումն քահանայութեան ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ Քրիստոսի Աստուծոյ մերոյ աւրհնելոյն յամենայն յաւիտեանս ամէն:

Խաչիկ ծառայ Յիսուսի Քրիստոսի շնորհաւք եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ամենայն Հայոց:

Գրեցաւ ձեռամբ Աղաթանգեղ դպրի ՆԻՆ. Տումարի Արամեան մնացուածի:

(Արարատ, 1868, էջ 32—34, Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 305—307 եւ Սմբատեան, Երնջակ, էջ 410—412):

Բ.

ԿՈՆԴԱԿ ԿԱՐԱՊԵՏ Բ. ԿԵՂԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1393—1408)

Ստեփանոս Զուղայեցիի գրութեան համեմատ Նախավկայի վանքին համար գրուած երկրորդ կոնդակը հանած է Կարապետ Բ. կաթողիկոսը՝ ՊԽԴ (1395) թուականին: Անձանօթ կը մնան սոյն կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ու ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ:

Գ.

ԿՈՆԴԱԿ ՊՕՂՈՍ Բ. ԳԱՌԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1416—1429)

Երուսաղէմի երբեմնի պատրիարքը եւ Սսի կաթողիկոսը Պօղոս Բ. Գառնեցիին Նախավկայի վանքին համար երրորդ կոնդակ գրողը կ'ըլլայ՝ «եւ ապա Տեառն Պօղոսի ի ՊԿԷ» (1418, հմմտ. վերը): Այնպէս կը թուի թէ Նախավկայի վանքին մէջ շատ կարեւոր

բաներ կը հանդիպէին, որ հեռաւոր Կիլիկիայի կաթողիկոսներն իրենց ձայնը մինչեւ հոն լսելի կ'ընէին, եթէ այս եւ նախորդ կոնդակն իրապէս գրուած են: Ստեփանոս միաբանէն միայն զիտենք այս կոնդակին գրութիւնը եւ չունինք անոր ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ու ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ:

Գ.

Ա. ԿՈՆՎԱԿ ԳՐԻԳՈՐ Ժ. ՄԱԿՈՒԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1441<sup>o</sup>—1466)

Գրիգոր Մակուեցիին Արտաղի Ս. Թաղէի վանքին առաջնորդն էր<sup>2</sup> եւ համակիր ու հետամուտ Հայոց կաթողիկոսական գահին Հայաստան (Էջմիածին) փոխադրութեան: Նա թեկնածու էր գահին: Սակայն ժողովականներու մեծամասնութիւնը կաթողիկոսական աթոռին վրայ Կիրակոս Խորվիրապետին կը բազմեցնէ: Եւ այնպէս կը թուի թէ՛ Գրիգոր այդ ատենէն իբրեւ հակառակաթոռ կաթողիկոս երեւան կու գայ եւ իրեն վիճակ ու ժողովուրդ կ'ունենայ: Կարճատեւ ժամանակի մէջ իր համակիրներու թիւը կ'աճի եւ Կիրակոսի մասին զժգոհութիւններ կը ծագին ու կ'աճին: Կիրակոս, որ հանդարտաբարոյ վանական եղած էր եւ համեստ, Էջմիածնի կաթողիկոսական գահէն կը հրաժարի եւ Գրիգոր Մակուեցիին սոյն աթոռին վրայ կը բարձրանայ:

Ստեփանոս Զուղայեցիին Գրիգորի անուան տակ գիտէ երեք կոնդակ արուած յանուն Նախավկայի վանքին՝ «Երեք ի Տեառն Գրիգորէ ի Պ/Թ» (1360, սակայն պէտք է նկատել որ գիր մը կը պակսի) ի ԶԾԵ (1506) եւ ի Գրիգորաէ ԶԱ (1452, հմմտ. վերը): ՊԹ թուականին, այս է 1360ին (եթէ համարինք թէ՛ մէջ տեղը գիր մը չի պակսիր, որ սակայն իրականին կը պակսի) Գրիգոր անուն կաթողիկոս չկայ: Արդ Պ եւ Թ տառերու միջեւ եղած պակասը պէտք է ընել եւ դնել Զ, որով կ'ունենանք ՊԶԹ (1440—1441) եւ այս թուականէն հասած է մեր ձեռքը կոնդակ մը յանուն՝ Գրիգոր Մակուեցիին, որ թէպէտ, ինչպէս կը տեսնուի, ամէնէն կաթողիկոս չէր ճանչցուած, սակայն ինքզինքը Էջմիածնի օրինաւոր կաթողիկոսը կը համարէր (Նօտարք, էջ 145) եւ կամ Կիրակոսի ընտրու-

<sup>2</sup> Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1941, էջ 45:

թեան տարւոյն մէջ պէտք է սրբադրութիւն կատարել (Արարատ, 1904, էջ 38): — Ինչպէս Մաղարթայ Նախավկայի վանքին մասին խօսած ժամանակ տեսանք՝ 1440ին հոն կայ Միւրթար եպիսկոպոս մը, որ այս կոնդակին մէջ կը յիշուի (առտ էջ 201):

Ստեփանոսի ահնարկած գրիգորեան այս կոնդակէն օրինակ մը կայ Էջմիածին:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ. Էջմիածնի մէջ գրուած այս «հնազոյն կոնդակը գրուած է նեղ եւ երկար թղթի մը միայն մէկ երեսին վրայ: Կտրուած է ճակատի քահանայական եւ թագաւորական կնիքը» (Արարատ, 1904, էջ 38):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ (համառօտուած, ինչպէս որ հրատարակուած է «Արարատ»-ի (1904, էջ 38) մէջ.

Չոր աւրհնութեամբն Աստուծոյ գրեմք ի սուրբ եւ ի հռչակաւոր յանուանի եւ յականաւոր վանքն ի Նախավկայն, ի սահմանալ թէմն եւ ի վիճակն իւր բոլորովին, ի Խաւ քաղաք եւ յերկիրն իւր. ի Շարիճօրն, ի յԱրարքն, ի Զաղացատեղն, ի Զուղա եւ ի յիւր վանքն, ի յԱստապատ եւ ի յիւր վանքն, ի Շիրինթալն, եւ յայլ ամենայն թէմն եւ ի վիճակն իւր բոլորովին...» — Սովորական օրհնութիւնից յետոյ յայտնուած է որ մեծահանդիսիւ եպիսկոպոս է ձեռնադրել ժողովուրդից ընտրած եւ ուղարկած «արեղայս՝ զՄիւրթարա, հռչակաւոր վանիցը սուրբ Ստեփաննու Նախավկայից եպիսկոպոս եւ ձեզ հոգեւոր առաջնորդ եղբայր եւ ընկեր» (Գրութեան ժամանակն է): «Գրեցաւ գիր աւրհնութեան բարձր հրամանիս մերոյ, յլստ ի մեզ մարդեղութեան եւ ծննդեանն մարմնով Գրիստոսի Աստուծոյ մերոյ ՌԴՃԽԱ. եւ ի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ՊԶԽԱ: Եւ ըստ առաջարին զմեծ թուին ՊԶԹ եւ ի մեր նստելս ի սուրբ աթոռս, որ է ամիսս ԺԱ. եւ աւուր Ե. Յունուար Է. եւ վասն առաւել հաստատութեան եւ աւատալոյ ձեզ ձեռնադրեցաք մեր իսկ սովորական կարմիր ձեռագրով: Կնքեցաւ վերոյ ծաղկաւետ տիրական երեւելի մեծ մատանեաւ քահանայական եւ թագաւորական»: (Վերջում աւելցրած է) «Գրեցաւ ձեռամբ Ստեփաննոս զպրի եւ զբարձրի մեր»: (Ստորագրութիւնն ունի խաչ եւ կարմիր թանաքով) «Գրիգոր ծառայ Աստուծոյ: Շնորհաւք եւ ողորմութեամբ նորին կա-

թողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք արեւելեան եւ Վաղարշապատու»: Նոյն տիտղոսը փոքր աւելի ընդարձակ ունի կոնդակի սկսուածքը»:

Ե.

Բ. ԿՈՆՎԱԿ ԳՐԻԳՈՐ Ժ. ՄԱԿՈՒԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Գրիգոր Մակուեցիին Նախավկայի վանքին տուած երկրորդ կոնդակը Ստեփանոսի գրութեան համաձայն յօրինուած է ԶԾԵ (1506) թուականին, որ սակայն սրբագրութեան կը կարօտի, վասն զի այդ թուականին Գրիգոր անունով կաթողիկոս չէ եղած: Ուստի եւ կա՛մ ըսելու է թէ՛ այդ թուականին Սարգիս կաթողիկոսը (որ 1506ին արդէն կոնդակ մը ունի, հմմտ. վարը), ուրիշ կոնդակ մըն ալ գրած է եւ կամ թուականական գրի մը պղտիկ սրբադրութեամբ մեծ սխալ մը ուղղել: «ԶԾԵ» վերածելու է ԶԺԵ (1466), որ է Գրիգոր Մակուեցի կաթողիկոսին գահակալութեան վերջին տարին: Ծանօթ է որ նա ստիպուեցաւ ժամանակ մը իր գրաւած աթոռը Զաքարիա Աղթամարցիին թողուլ եւ անոր մահէն յետոյ իր պաշտօնը շարունակել: Հետեւաբար պիտի խորհնք թէ՛ Գրիգոր Մակուեցիին իր մահէն յառաջ գրել տուած է այդ կոնդակը:

Այս կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ու ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ զեռ անձանօթ կը մնան:

Զ.

Գ. ԿՈՆՎԱԿ ԳՐԻԳՈՐ Ժ. ՄԱԿՈՒԵՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Գրիգորի կամ Գրիգորսի անունով կայ երրորդ կոնդակ մըն ալ: Գրուած է ԶԱ, այս է 1452 թուականին, որ ատեն Գրիգոր Մակուեցիին կաթողիկոսական քօղն անվրդով կը կրէր: Այդ կոնդակը Շահխաթունեան տեսած է՝ «Քանզի յինչ ինչ կոնդակս կաթողիկոսաց յիշատակի ընդ այլ սրբութեանց եղելոց յաթոռ այսր եւ զեղարդն սուրբ ներկեալն արեամբ Յիսուսի: Յառաջին կոնդակի գրեալ ի թուին Հայոց ԶԱ. ի Ա. Դեկտեմբերի ի Գրիգոր Ժ. կաթողիկոսէ...: Իսկական օրինակը այսոցիկ կոնդակաց գտանին ընդ այլ հնութեանց ի վանս Ստեփաննոսի Նախավկայի,

որ ի ձորն հին Զուղայու առ Մաղարթայ լեռամբ» (Ստորագրութիւն, Ա., էջ 53, հմմտ. անդ, Բ., էջ 288—289 եւ Նօտարք, էջ 168): Շատ կարեւոր է Շահխաթունեանի եւ այն յաւելումը թէ Գրիգոր այս կոնդակը կը գրէ՝ «Ի Ժ երրորդ ամի, միոյ ամսոյ եւ տասն աւուր կաթողիկոսութեան իւրոյ» 1452ին (անդ, էջ 289):

Այս կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ու ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ չենք գիտեր:

Է.

ԿՈՆՎԱԿ ԱՐԻՍՏԱԿԵՍ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1448—1466—1470)

Գրիգոր Մակուեցիին մահէն յետոյ կաթողիկոսան գահը կը բարձրանայ իր աթոռակիցը Արիստակէս, որ չորեքամեայ իշխանութենէ վերջ 1470ին կը մեռնի: Մինչդեռ Ստեփանոս Զուղայեցի 1476ին (ԶԻԵ թուականին) անոր անունովը կոնդակ մը կը յիշէ: Հետեւաբար կամ անուան կամ թուականի սրբադրութիւն հարկաւոր է: Եթէ անունը սրբագրենք՝ պիտի գրենք «Յովհաննէս Է» (1474—1484), իսկ եթէ թուականն՝ այն ատեն զայն կարելի է ուղղել ԶԺԵ (1466) եւ մտածել որ Արիստակէս իր կաթողիկոսութեան առաջին տարին Նախավկայի վանքին տուած է կոնդակ մը, որուն

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ՝

անձանօթ:

Ը.

ԿՈՆՎԱԿ ՍԱՐԳԻՍ Գ. ՄԻԻՍԱՅԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1484—1515)

Արիստակէսի յաջորդներէն է Սարգիս Միւսայլ (միւս այլ) կաթողիկոսը, որ ԶԾԵ թուին (1506) Ստեփանոս Զուղայեցիին վկայութեան համաձայն Նախավկայի վանքին կոնդակ մը գրէ, սակայն զժբարխտաբար ինծի անձանօթ կը մնան անոր

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ:

Թ.

ԿՈՆՏԱԿ ԱՐԻՍՏԱԿԵՍ ԿԱԹ.Ի ԵՒ ԿԱՄ ԳՐԻԳՈՐ ԺԱ. ԲԻԻՉԱՆԳՈՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (1537—1542)

Սարգիս Միւսայր կաթողիկոսի աթոռակիցներէն է Արիստակէս Գ. կաթողիկոսը (1484—1499) : Անկէ վերջ այս անունով կաթողիկոս չկայ : Եւ սակայն Ստեփանոս Զուղայեցի գիտէ կոնդակ մը՝ «Եւ եւս Արիստակիսէ Տեառն ԶՂ» (1541) : Այս թուականին էլ միաձնի կաթ. գահին վրայ կը նստէր Գրիգոր ԺԱ. Բիւզանդացին, որուն անունովը հասած է ընդարձակ կոնդակ մը, որով անիկա Աթանաս վարդապետը Նախավկայի վանքին եպիսկոպոս կը հրատարակէ : Հետեւաբար Արիստակէս անունը պէտք է սրբազրեւ Գրիգորի եւ արդէն չափազանց զարմանալի պիտի ըլլար, եթէ կոնդակներու շարքին մէջ այս կոնդակին յիշատակութիւնը չըլլար : Յաւան է որ՝ Սմբատեան միտ չէ զրած թուականին եւ նոյն կոնդակը վերագրած է Գրիգոր Ժ. կաթ. Մակուեցիին (հմմտ. Երնջակ, էջ 413 եւ 417) : Եւստիանոս թուականին ծանօթ է այս կոնդակը իբրեւ Գրիգոր ԺԱ. (հմմտ. Ստորագրութիւն, Ա., էջ 53) եւ արդէն բովանդակութիւնն ալ բոլորովին պայծառ կը ցուցնէ թէ 1541ին զրուած է, վասն զի կը յիշատակուի հոն թէ՛ Աթանաս Ստեփանոս Սալմաստացիին (որ ետքէն Գրիգոր ԺԱ. ի յաջորդը կ'ըլլայ) աշակերտներէն էր (հմմտ. վարը) :

Այս կոնդակին ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ անծանօթ, իսկ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ է՝

Անուամբ անեղին Աստուծոյ Հաւր եւ ի փառս ծնեցելոյն ի նմանէ անեղապէս Որդւոյն Միաձնի եւ ի գովեստ Բղիսեցելոյն ի Հաւրէն Հոգւոյն ճշմարտի այս մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է եւ աւրհնութիւն :

Գրիգոր ծառայեցն Աստուծոյ ծառայ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ շնորհաւք եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ընդհանուր ամենայն Հայաստանեայց եւ եպիսկոպոսապետ մեծաց Հայոց եւ պատրիարք արեւելեան Վաղարշապատու, տեղապահ եւ յաջորդ, աթոռակալ եւ փոխանորդ սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի եւ Թագէոսի եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, զոր գրեմք ի զբանէ աստուածազիր աթոռոց եւ

լուսակիր տաճարէ աստուածաշէն կաթողիկէ սուրբ էջմիածնի եւ ի բաղմահաւաք սրբութեանց սորա, նախ յաստուածամուխ սուրբ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի Քրիստոսի եւ ի թաղն արքայական ի փշոց պսակէ եղեալ ի գլուխն Յիսուսի, եւ սեւեռեալ բեւեռացն բաղկացն Յիսուսի եւ ի ծածկոյթ յերեսացն Յիսուսի ի սուրբ վարչամակէն եւ ի տէրունական աստուածընկալ սուրբ նշանացս եւ ի շնորհաբաշխ աջոյս մեր Լուսաւորչին Գրիգորի եւ ի սուրբ Կոստանաց գերեզմանացս Հովիտիմեանց եւ Գայիանեանց, եւ այլ շրջակայ սրբութեանցս աստուածազարդ սուրբ աթոռոցս էջմիածնի, զոր եւ առաքեմք նախ ի սուրբ Նախավկայի վանքն եւ յիւր սեպհական թէմն եւ վիճակն, նախ ի յամենաւրճեալ եւ յաստուածապահ յանուանի եւ յակնաւոր մայրաքաղաքն ի Սոյ, որ է Զերեւանդ գաւառ եւ յամենայն վիճակն իւր բոլորովին ի Ղարաղարէն որ բաժանի յառաքելոց յերկրէն եւ գնայ մինչեւ ի Ղարաթափայն եւ բաժանի ի Սալմաստայ յերասխայ մինչեւ ի Մարանդայ գրիւէն ի Ծիրինթալն իւր երկրորդն ի յաստուածախնամ գիւղաքաղաքն Զուղայ, ի յԱստապատ, ի մեծ քաղաքն Նախչուան եւ ի Եամբուձորն բոլորովին, որոց յայդոցիկ բնակչացը ի միասին պատուելի քահանայից, սրբասէր կրաւնաւորաց, իմաստուն վաճառականացը, աստուած սէր ձեռագործացը, բարեպաշտ տանուտերացը, ձեռնահմուտ արհեստաւորացը, աշխատասէր հողագործացը եւ ամենայն չափու հասակի՝ մեծի եւ փոքու, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց եւ կուսից հոգեւոր գաւակաց բաղմաշարշար նահատակին սուրբ հաւրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ որով անուանք ձեր գրեալ են ի գրին կենաց յանմուտաց յիշատակութիւն Աստուծոյ :

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն հոգեւոր որդիք մեր ի Քրիստոս, զի որպէս աւրէն է աստուածային եւ սահման մահկանացու բնութեանս ամենայն որդի հարազատ ժառանգել զտուն եւ զհայրենիս իւրեանց : Այսպէս եւ այսու աւրինակաւ եկն առ մեզ ի յազգմանէ Հոգւոյն սրբոյ ընտրեալդ Աստուծոյ եւ ի մարդկանէ հեզահոգի, բարեմիտ, եւ սրբասէր կուսան եւ սուրբ վարդապետ տէր Աթանասը, որ է անեալ եւ վարժեալ ի սուրբ Նախավկայի վանքն եւ ուսեալ էր զիմաստս կրթական ի ձեռն Ստեփաննոսի

քաջ բարունապետի Սալմաստեցւոյ, որ եկն ի սուրբ աթոռս ձեր ամենայն միաբանից վկայութեամբը, մանաւանդ բոլորեցունց ձեր թէմովը վկայած նաեւ յԱստուծոյ իսկ, իսկ մեք որպէս խնամածու եւ զթած հայր ի վերայ սիրելի որդւոյ իւրոյ՝ պատշաճ եւ իրաւունք համարեցաք զԱթանաս վարդապետը լինել եպիսկոպոս սուրբ Նախավկայիդ եւ իւր սեպհական վիճակին եւ զոչ այլ ոք օտար, զի օտարն վարձկան է եւ ոչ ճշմարիտ հովիւ, վասն որոյ կոչեցաք զզա ի կարդ եւ յաստիճան եպիսկոպոսութեան խորհրդով ձեռնադրութեան աստուածային իշխանութեամբն : Եւ (ձեռնադրեցաք) զԱթանաս վարդապետը եպիսկոպոս աստուածամուխ սուրբ Գեղարդեամբս եւ աստուածախոս սուրբ Աւետարանաւ եւ շնորհաբաշխ սուրբ աջովս մեր Լուսաւորչին Գրիգորի ի մէջ երկնանման սուրբ տաճարիս էջմիածնի : Եւ պարզեցաք զմա յակնաւոր սուրբ ուխտն Նախավկային բոլորովին բնական եւ սահմանեալ վիճակ իւր զոր վերադրեցաք զմա թէմ, աթոռ եւ հանդստեան տեղի, վասն որոյ առաջնորդութեամբ Միաձնի Որդւոյն Աստուծոյ առաքեցաք զԱթանաս վարդապետը՝ սրբազան եպիսկոպոսն առ ձեզ մերով առաքելական եւ հայրապետական իշխանութեամբ՝ հովուել զձեզ եւ ուսուցանել, գնալ յօրէնս եւ ի պատուրանս անարատութեամբ եւ սրբութեամբ, աալով զանձն օրինակ բարեաց ամենեցուն մանաւանդ պահեսցէ զանձն իւր սրբութեամբ, արդարութեամբ եւ խոնարհութեամբ առնելով ինքն եւ ապա ուսուցանելով ձեզ, պահելով զանձն ի բամբասանաց առ մարդիկը եւ անդատապարտ առ Աստուած : Կոչեսցէ զիմաստունն եւ զ(ան)արժանն եւ վկայեալսն ի կարդ եւ յաստիճան կիսասարկաւագութեան, սարկաւագութեան եւ քահանայութեան, կալցի եւ հրամանաւս մերով ի վերայ ձեր առաքելաբար իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ :

Այլ եւ զամենայն կանոնեալ հաս եւ իրաւունս ձեր, զոր յամենայն տարի պարտիք տալ աթոռոյ բաժին, տուք ի սուրբ Նախավկայի վանքն ի ձեր հոգւոյ տունն, եւ եթէ զինչ է հաս եւ իրաւունք, այս է հաս եւ իրաւունքն, զինչ երէց որ ի թէմը կայ՝ նոցանէ տանէն զինչ հասք որ լինի, մուտքն Նախավկային է, տեառեական մատաղն որ լինի երին, մորթին իւր աթոռոյն է, յանկարծա-

մահ որ լինի Ս.իցն որ մատաղն եպիսկոպոսին է եւ կողոպուտքն լաւ խալի մի կամ լաւ շուրջառ տան յաթոռն, դերախայրիս կալոց եւ հնձանաց երախայրիք այն է յեղնագլուխն կէս մարդան հաց, յամէն հնձանէ մէկ դորակ զինի տան, զսրբանուէրն որ է սրբազրամ, այդ եկեղեցւոյ եւ խաչի լուսազին է, այս յամենայն աշխարհ յոր տեղ որ քրիստոնէութիւն կայ, զայդ կու տան իւրեանց աթոռոյն, եւս առաւել զսրբանուէրն, որ եկեղեցւոյ եւ խաչի լուսազին է, որ ի շատէն շատ, եւ ի փոքրէն փոքր, որպէս ասէ Տէրն յԱւետարանն թէ՛ «Որում շատ տուաւ շատ խնդրեցի ի նմանէ եւ որում սակաւ՝ սակաւ» որ յամէն տարի միանգամ սրբանուէր ժողովին, որ սրբոցն է բաժին եւ այլ զինչ հարկ որ լինի, առանց աթոռոյ հրամանին չունիք իշխանութիւն կատարել, թէ մատաղ, թէ խաչ օրհնէք, թէ այլ ինչ պատեհն աթոռոյն, որպէս յամենայն տեղի, այս է հաս եւ իրաւունք աթոռոյն եւ բաժին որպէս ասացաք զամենայն :

Եւ մի ոք իշխեսցէ հակառակիլ զմա եւ կամ խոր(հ)իցէ իրաւանց դորա, կամ չի հնազանդի զմա եւ հակառակ լինի հրամանաց մերոց եւ կաթողիկոսարանիս, այնպիսիքն եղիցին ի ներքոյ պատժոյ եւ դատապարտութեան, իսկ հնազանդեալքն դորա եւ հրամանի սուրբ աթոռոյս օրհնեալ լիցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց եւ ի մէնջ, ամէն :

Եւ զուք սպասաւորք սուրբ Նախավկայիդ՝ Յովհաննէս վարդապետ եւ Մկրտիչ եպիսկոպոս եւ Տէր Հերապետ եպիսկոպոս եւ այլ մեծ եւ փոքր միաբանք սուրբ ուխտիդ սիրով ընկալարուք զԱթանաս վարդապետը ձեզ եպիսկոպոս, որպէս արժանաժառանգ այդմ աթոռի եւ գահի : Եւսրհեցաք եւ ի ձեռն դորա ձեզ զպատուական պարզեալ զիւրն սուրբ օծութեան, սրբալոյս մեռու(ւ)նն սուրբ, զոր Հոգին սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն աւագանաւս յորդեգրութիւնն Հօրն երկնաւորի եւ ի ժառանգակցութիւն Քրիստոսի, նոյն եւ ի ճակատն նշան հաստատութեան ի յօժումն քահանայից եւ ի նորոգութիւն սուրբ եկեղեցւոյ, բայց յամենայն ամի նոր առցի ի մէնջ եւ զհինն ի նորն խառնեսցէ, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն :

Գրեցաւ զիր օրհնութեան բարձր հրամանի մեծի սուրբ աթոռոյս Էջմիածնի ի թուականութեանս Հայոց մեծաց ԶՂ (1541) ամի, եւս առաւել հաստատութեան ձեռնագրեցաք մերով սովորական կարմիր ձեռնագրաւ ի փառս Քրիստոսի:

Գրիգոր (Ժ.) ծառայ ծառայիցն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի շնորհօքն եւ ողորմութեամբ նորին կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու սուրբ Էջմիածնի»:

(Հրտ. Շահխաթունեան, Ստորադրութիւն, Բ., էջ 308—313. Սմբատեան, Երնջակ, էջ 413—417:)

(Շարունակելի:)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

**ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ**

(Շարունակութիւն:)

**Գ. ՄԻԻՍ ՀԱՅ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՆՆԵՐԸ**  
(ԲԵՐՈՎՔԻ ԳԱՏՎԱԵՆՆԵՑ, ԳԵՐՈՎ ԴՈՂՈՒՅԵՆՆԵՑ, ԳԵՏՐՈՍ ՍԻՄԵՈՆԵՆՆԵՑ ԵՒ ԱՅԼՔ)

Մեր խօսքը վերաբերում է ուրեմն, թաշաուր Արովեանից զատ, Դորպատի համալսարանի արձանագրուած հայ ուսանողներին: Այլ եւ, Դորպատի համալսարան ասելով այս կապակցութեան մէջ հասկանում ենք նրա միայն գերմանական շրջանը, որ տեւեց մինչեւ 1889 թուականը, իսկ այնուհետեւ ռուսացման ենթարկուեցաւ: Առաջին՝ գերմանական շրջանին են այդ համալսարանը յաճախել ու իրենց բարձրագոյն ուսումը եւ Գերման-Եւրոպական կրթութիւնն առել արեւելահայ կեանքի ու գրականութեան ռազմիրաներից շատերը, իրենց գլուխ ունենալով խաչատուր Արովեանը: Տեսանք՝ Դորպատի համալսարանի առաջին արձանագրուած հայ ուսանողն է եղած՝ Ստեփան Նազարեանց, Արովեանի դպրոցական ընկերը ու սրտակից բարեկամը: Այս եկել են մի շարք ուրիշներ, ոմանք՝ Արովեանի նախկին աշակերտներ: Արձանագրուած այդ հայ ուսանողների թիւը եղած է, Նազարեանցից սկսած, 1835—1889, քառասուն: Դրանց ամենի մասին աւելի կամ պակաս չափով նիւթեր կան պահուած Դորպատի համալսարանի

դիւանում<sup>18</sup>, բայց ո՛չ նաեւ, դժբախտաբար, աղատ ունկնդիրները: Այս էլ ասենք, որ 1889 թուականից յետոյ եւս, ուսական շրջանում, զգալի թուով հայ ուսանողներ յաճախած են Դորպատի համալսարանը: Եւ սակայն, քիչ բացառութեամբ, դրանք աչքի ընկնող դեր չեն խաղացած հայ գրական կամ հանրային կեանքում: Մեզ հետաքրքրողը ուրեմն Դորպատի համալսարանի գերմանական շրջանն է:

1. Դորպատի համալսարանի արձանագրուած մէկ քառասնեակ հայ ուսանողներից (1835—1889 թ.) առաջինը՝ Ս. Նազարեանցի խօսքն արինք արդէն: Այժմ յիշատակենք միւսների անունները՝ ժամանակագրական կարգով: Նկատենք սկզբից, որ քառասուն հայ դորպատեանները ո՛չ ամենը աւարտել են համալսարանի այս կամ այն ճիւղը, շատերը միայն կարճ ժամանակ հետեւած են նրա դասընթացներին, յետոյ իրենց ուսումը շարունակած են այլ տեղ եւ կամ ընդհատել են այն: Հայ դորպատեաններից ոմանց անունները ծանօթ են ներկայ սերունդին եւս: Միւսները, մեծ մասով, դարձեալ ազգային-հանրային անուանի դործիչներ եղած են ժամանակին:

Ս. Նազարեանցից յետոյ, բաւական ժամանակ, ո՛չ մի հայ ուսանող չէ եղած Դորպատում: Հետեւում է՝

2. Բրիտապիոք Աւագեանց: Ծն. 9 Մայիսի 1815 թ. Նոր-Նախիջևան: Դորպատ է եկած Կադանի համալսարանի երրորդ կուրսից (երրորդ տարուան դասընթաց): 1844—1850 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս բժշկութեան ուսանող: Աւարտական քննութիւն<sup>19</sup> չէ տուած:

3. Գեորգ Ա. Բիւնեանց, թաշաուր Արովեանի նախկին աշակերտ, նրա մտերիմ բարեկամներից մին: Ծն. 20 Յուլ. 1829 թ. Թիֆլիս: 1848—1852 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս բնագիտութեան ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

4. Գաբրիէլ Խառիսեան, թաշ. Արովեանի աշակերտներից: Դպրոցական, գրական-դիտական եւ հանրային ծանօթ դործիչ:

<sup>18</sup> Որոշ նիւթեր կան համալսարանի (Դորպատի) գործարանի քննութեանց ներկայացած Հայերի մասին եւս, որոնց անունները կը թուենք վերջը:  
<sup>19</sup> Համալ. Հանդ. Ամս., 1941, էջ 116, ծն. 16:

Ծն. 29 Փետր. 1831 թ. Թիֆլիս: Նախապէս աւարտած է Մոսկուայի Լազարեան ձեմարանը ու յաճախած այնտեղի համալսարանը (1847—1848), ապա, 1848—1851 թ., Դորպատի համալսարանը, հետեւելով քիմիա-բանութեան ճիւղին: Տուել է աւարտական քննութիւն, ստացել վկայեալ ընթացաւարտի տիտղոս ու արժանացել «Ֆիզիկո-մաթեմատիկական Փակուլտետի կանդիդատ» աստիճանին:

5. Գրիգոր Աղափիբեանց, հետազային Էջմիածնի եպիսկոպոս: Ծն. 26 Յունիսի 1827 թ. Աստրախան: Դորպատ է եկած Մոսկուայի Լազարեան ձեմարանից: 1849—1851 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

6. Գեորգ (Եգոր) Միքիմանեանց: Ծն. 10 Սեպտ. 1831 թ. Թիֆլիս: Լազարեան ձեմարանից է եկած Դորպատ, ուր եւ 1849—1853 թ. եղած է տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

7. Համբարձում Փափագեանց: Ծն. 26 Հոկտ. 1830 թ. Կոստանդնուպոլիս: Դորպատ է եկած Լազարեան ձեմարանից: 1849—1851 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

8. Մարկիոն Ռոտինեանց: Բժիշկ: Ծն. 20 Դեկտ. 1830 թ. Թիֆլիս: Դորպատ է եկած Լազարեան ձեմարանից: 1850 թ. կէս տարի ուսած է բնագիտութիւն (Ֆիզիկ), այնուհետեւ, մինչեւ 1854 թ., բժշկութիւն: 1855 թ. ձեռք է բերած բժշկ. Դորպատի դիպլոմ:

9. Պետրոս Սիմեանեանց, հետազային հանրային-դպրոցական ծանօթ դէմք, խմբագիր «Մեղու Հայաստանի» օրաթերթի (Թիֆլիս): Ծն. 3 Դեկտ. 1830 թ. Նոր-Նախիջևան: Դորպատ է եկած Լազարեան ձեմարանից: 1851—1853 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

10. Քերովք Պատկանեան, հետազային ծանօթ հայագէտ եւ արեւելագէտ, ուսուցչապետ Պետերբուրգի համալսարանի: Ծն.

4 Մայիսի 1833 թ. Նոր-Նախիջևան: Դորպատ է եկած Լազարեան ձեմարանից: 1851—1852 թ. յաճախած է այնտեղի համալսարանը, հետեւելով տնտեսական գիտութեանց: Աւարտական քննութիւն չէ տուած (Դորպատում):

11. Միքայէլ Փրիդոնեանց: Ծն. 15 Մարտի 1829 թ. Թիֆլիս: Դորպատ է եկած՝ Լազարեան ձեմարանից: 1851—1855 թ. յաճախած Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

12. Յակոբ Տէր-Միքայէլեանց: Ծն. 15 Հոկտ. 1829 թ. Թիֆլիս: Դորպատ է եկած՝ Թիֆլիսի գիմնազիայից: 1851—1852 թ. յաճախած է Դորպատի համալսարանը որպէս տնտեսական գիտութեանց ուսանող: Աւարտական քննութիւն չէ տուած:

13. Գեորգ Դոդոնեանց, հեղինակը հանրաձանօթ «Միժեռնակ» երգի, որ գրուած է Դորպատում: Ինչպէս Ստեփան Նազարեանցի, այնպէս եւ Գեորգ Դոդոնեանցի մասին բաւական տեղեկութիւն է պահուած Դորպատի համալսարանի դիւանում, ուր երկու թղթածրար կան նրա անունով, մէկը համալսարանի Խորհուրդի եւ տեսչութեան, միւսը՝ Փակուլտետի գործերում: Այստեղ առաջ բերենք ամենակարեւոր տեղեկութիւնները Դոդոնեանցի ուսանողական կեանքից:

Դոդոնեանց ծնած է 18 Փետր. 1831 թ. Սիմֆերոպոլ (Ղրիմ): Աւարտած է Մոսկուայի Լազարեան ձեմարանը: 1852 թ. Յունուարին մտած է Դորպատի համալսարան: Նախ հետեւած է տնտեսական գիտութեանց (Ֆիզ. մաթեմ. ֆակ.), ապա, նոյն թուականի Յուլիսի սկսած՝ այսպէս կոչուած դիւանագիտական ուսմանց (Diplomatie) ճիւղին (իբարաբ. ֆակուլտետ): Ուսումն ընդհատած է 1855 թ. Դեկտ. 19ին. որոշ է՝ հիւանդութեան պատճառով: 1854 թ. Հոկտ. 8 թուականի բժշկական մի վկայաթուղթի մէջ կարգում ենք, որ Դոդոնեանց այդ թուականի առաջին կիսամեակի ընթացքում տառապել է աչքերի բորբոքումով. բժիշկը արդիւն է նրան աշխատանքը: Բայց եւ այնպէս, տեղեկանում ենք, Դոդոնեանց նոյն այդ 1854 թուականի Դեկտ. 7ին յաջողապէս տուել է աւարտական քննութեանց առաջին մասը: Յետոյ եւս տառապել է հիւանդութեամբ: